31 մարտի 2015 թվականի N 237 - Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏԻ 2012 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 27-Ի N 379-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 5-րդ մասը՝

1. Հայաստանի Հանրապետության վարչապետի 2012 թվականի ապրիլի 27-ի «Տեխնիկական կանոնակարգման մասին», «Ստանդարտացման մասին», «Չափումների միասնականության ապահովման մասին», «Հավատարմագրման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների կիրարկումն ապահովող միջոցառումների ցանկերը հաստատելու մասին» N 379-Ա որոշման N 3 հավելվածում կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումը՝

1) 6-րդ կետի 4-րդ սյունակում «2012 թ. հոկտեմբերի 3-րդ տասնօրյակ» բառերը փոխարինել «2015 թ. հունիսի 3-րդ տասնօրյակ» բառերով.

2) 7-րդ կետն ուժը կորցրած ճանաչել.

3) լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 9-րդ կետով.

«

9.	«Ստուգաչափման և տեսակի հաստատման ենթակա չափման միջոցները սահմանելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը Հայաստանի Հանրապետության կառավարություն ներկայացնելը	ՀՀ էկոնոմիկայի նախարարություն	2015 թ. մայիսի 3-րդ տասնօրյակ	Ֆինանսավորում չի պահանջվում:

»:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Հ. ԱԲՐԱՀԱՄՅԱՆ